ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 6
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/1 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Վայրը՝ **ք.Երևան**

24 հունվարի 2024թ.
ժամը **11:30**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ **atdf@atdf.am**) գործադիր տնօրենի **«29» նոյեմբերի 2023թ.** թիվ **871** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Արարատի մարզի Ջրահովիտ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման»** աշխատանքների ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/1** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի գնահատման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Էմանուել Իվանյան՝ Հանձնաժողովի նիստի նախագահ
Աշոտ Սահակյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Գայանե Քարիմյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Մետաքսյա Եղիազարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հանձնաժողովն արձանագրեց, որ
«Էլշին» ՍՊԸ և «Էլա Շին» ՍՊԸ ՀԳ-ի մասով՝

1.1 **«Էլշին» ՍՊԸ և «Էլա Շին» ՍՊԸ ՀԳ-ի** (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտը ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Համաձայն ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության՝ Մասնակցի՝ նախորդող հինգ տարիների համախառն եկամուտների հանրագումարը կազմում է՝ **1,261,738,220 ՀՀ դրամ:**

1.3 **«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ-ի** կողմից տվյալ օրվա դրությամբ Բանկային երաշխիքի իսկությունը և այն ստորագրած անձի իրավասությունները պարզելու նպատակով ուղարկված հարցման վերաբերյալ պատասխանը ստացվել է բավարար:

1.4 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է հրավերով հրապարակված կողմնորոշիչ գինը 29 %-ով:

1.5 «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ով տրված կարգի «VII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ» բաժնի 40-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են գնման գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Սույն պարբերության պահանջները չեն կիրառվում էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգի դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ հրավերի պահանջներին բավարար է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Վերոնշյալ իրավանորմերի դիսպոզիտիվ վերլուծությունից հետևում է, որ մերժման են ենթակա հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը, ընդ որում, այն դեպքում, երբ մրցույթով ներկայացված են մեկից ավելի հայտեր և դրանցով առաջարկվող գները գերզանացում են գնման գինը, ապա հանձնաժողովն իրավասու է ընտրված մասնակից ճանաչել ավելի ցածր գին առաջարկած մասնակցին՝ այն պայմանով, որ կնքվելիք պայմանագրով տրված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Բացահայտելով իրավաստեղծի կամքը և իրավանորմի տրամաբանությունը՝ պարզ է դառնում, որ մրցույթով գնահատող հանձնաժողովն իրավասու է հաղթող ճանաչել գնման գնից բարձր գին առաջարկած մասնակիցներից ավելի ցածր գին առաջարկած մասնակցին՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում.

- մրցույթով նախատեսված աշխատանքների ձեռքբերման համար նախատեսված են լրացուցիչ ֆինանսական միջոցներ,
- մրցույթով կնքվելիք պայմանագրով տրված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

Միևնույն ժամանակ, ըստ հրավերի 8.7-րդ կետի՝ եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են սույն հրավերով ներկայացված՝ **օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթով (փաստաթղթերով) սահմանված գինը,** ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից: Սույն կետի պահանջները չեն կիրառվում, երբ հայտեր ներկայացրել են մեկից ավել մասնակիցներ և միայն մեկ մասնակցի հայտն է գնահատվել հրավերի պահանջներին բավարար:

Այսինքն՝ մրցույթով մասնակիցների կողմից գնման գնից բարձր գին առաջարկելու պարագայում հանձնաժողովն իրավասու չէ ճանաչելու հաղթող համապատասխան մասնակցին, եթե լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, քանզի վերջնանշված պայմաններում օբյեկտիվորեն առկա չէ գնման հնարավորությունը՝ համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության հիմքով: Ընդ որում, վերը նշված ընթացքը բացառվում է, երբ ներկայացվել են մեկից ավելի հայտեր և միայն մեկ մասնակցի հայտն է գնահատվել հրավերի պահանջներին բավարար:

Փաստորեն, սույն դեպքով քննարկելի է լրացուցիչ ֆինանսական միջոցների նախատեսման հարցը, որպիսի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ սույն մրցույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերությունների և 3-րդ պարբերության 1-ին, 2-րդ ենթակետերի պահանջների հաշվառմամբ և ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8.2-րդ կետի կատարումն ապահովելու

անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետությունում որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակներում պետական բյուջեի միջոցների հաշվին:

«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի համաձայն՝ ծախսերի նախահաշվային գումարները նախատեսված են Հավելված 1-ով, որի Աղյուսակ 1-ի՝ Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում, 1236 ծրագրային դասիչով՝ Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում, նախատեսված է 92,861,559.8 հազ. դրամ գումար:

Հարկ է արձանագրել նաև, որ վերը նշված գումարը նախատեսված է հստակ թվով հաստատությունների հիմնման, կառուցման և բարելավման նպատակով, որպիսի չափով գումարային հատկացման նախատեսումն, ըստ էության, պետք է հիմնված լինի կոնկրետ հաշվարկների և ուսումնասիրությունների վրա, ուստիև 2024 թվականի բյուջետային նախատեսումը, առնվազն այս պահի դրությամբ, սպառիչ է:

Ինչ վերաբերում է վերաբաշխման հնարավորությանը, ապա այս մասով հարկ է նկատել, որ դասիչներով սահմանված բյուջետային գումարների վերաբաշխման ինստիտուտը հիմնվում է համապատասխան հանգամանքների առաջացման և դրա արդյունքում ստեղծված իրավիճակի վրա, հետևաբար այս պահի դրությամբ վերաբաշխման հենքով լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման փաստն առկա չէ: Այսպիսով, վերոգրյալ ամբողջի հիման վրա՝ հանձնաժողովը գտնում է, որ սույն մրցույթով ներկայացված հայտը ենթակա է մերժման՝ գնման գնից ավելի բարձր գին առաջարկելու և մասնակցին հաղթող ճանաչելու համար անհրաժեշտ օրենսդրական պայմանի՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների, բացակայության հիմքով:

«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այլանս» ՍՊԸ ՀԳ-ի մասով՝

1.6 ***«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այլանս» ՍՊԸ ՀԳ-ի*** (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտը ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

1.7 **«Ամերիաբանկ» ՓԲԸ-ի** կողմից Բանկային երաշխիքի իսկությունը և այն ստորագրած անձի իրավասությունները պարզելու նպատակով ուղարկված հարցման վերաբերյալ պատասխանը ստացվել է բավարար:

1.8 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, բացառությամբ՝

- Հայտում բացակայում է տեղակապում իրականացնող՝ «ՄԻԿՐՈ ՀԷԿ» ՍՊԸ-ի լիցենզիան
- Անհրաժեշտ է ՀԳ պայմանագրի 5-րդ կետը համապատասխանեցնել «Գնումների մասին»

ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետին, մասնավորապես՝ ՀԳ պայմանագրի 5-րդ կետում «համապարտ պատասխանատվություն» բառերից առաջ լրացնել «համատեղ և» բառը:

1.9 ներկայացված նմանատիպ պայմանագրերի պատշաճ գնահատումն իրականացնելու նպատակով՝ անհրաժեշտ է պահանջել հայտատուից առկայության դեպքում տրամադրել նախորդ հինգ տարիներին կատարված պայմանագրերի ծավալաթերթ-նախահաշիվները և ավարտական ակտերը և/կամ հանձնման-ընդունման արձանագրությունները, ինչպես նաև ներկայացրած ավարտական ակտի համապատասխան պայմանագիրը:

1.10 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այյանս» ՍՊԸ ՀԳ-ի գործընկեր կազմակերպությունները հանդիսանում են ոչ ռեզիդենտ՝ ԱՀ-ում գրանցված կազմակերպություններ, և համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կարող են դիմել ՀՀ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ իրենց ընկերությունների պետական գրանցումը ճանաչելու համար, ուստի գրանցման ճանաչում իրականացված լինելու հանգամանքը պարզելու նպատակով մասնակցից պահանջել գրանցման ճանաչման մասին փաստաթղթերի պատճենները՝ առկայության դեպքում:

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 **Էլշին ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ ՀԳ-ի** կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել նկատի ունենալով, որ հայտով ներկայացված գինը բարձր է կողմորոշիչ գնից, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված:

2.2 Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

2.3 Ծանուցել **«Կապավոր» ՍՊԸ և «Գրանդ Այյանս» ՍՊԸ ՀԳ-ին** շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև սույն արձանագրության 1-ին կետի 1.9-րդ և 1.10 ենթակետերում արձանագրված հարցերի վերաբերյալ, մինչև նիստի կասեցման վերջնաժամկետը՝ 25 հունվարի 2024թ. ներառյալ,

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 2024 թվականի հունվարի 26-ին, ժամը 14:00-ին:

Հանձնաժողովի

նախագահ՝

Էմանուել Իվանյան _____

անդամներ՝

Աշոտ Սահակյան _____

Գայանե Քարիմյան _____

Մետաքսյա Եղիազարյան _____

քարտուղար՝

Լիլիթ Սեդրակյան _____